

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 9/1

19 փետրվարի 2013թ.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը, ուսումնասիրելով քաղաքացի Արմենուհի Մալխասյանի դիմում-գանգատը (մուտք ՀՀ ԿԱ ՊԵԿ 01.02.2013թ. թիվ 1053-13) և վերջինիս առնչվող նյութերն ու ապացույցները, եկավ եզրակացության, որ դիմում-գանգատի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ:

Քաղաքացի Արմենուհի Մալխասյանի դիմում-գանգատում մասնավորապես նշված է.

2011թ-ի դեկտեմբերի 2-ին ռուսական <Պրոսպերա> ընկերությունից 270.000.000 դրամ գումարով ձեռք եմ բերել հասարակական նշանակության շինություն ք.Երևան, Կորյունի 23 հասցեում: Գործարքը վավերացվել է Երևան քաղաքի Կենտրոն նոտարական տարածքի նոտար Գայանե Ազարյանի կողմից: Գործարք իրականացնելու վայրում փակցված չի եղել ՀՀ կառավարության 19.02.2009թ-ի թիվ 199-Ն որոշմամբ սահմանված կարգով ԱԱՀ-ով հարկվող գործարքներ իրականացնելու վերաբերյալ քաղաքացիներին իրազեկելու մասին տեղեկությունը, ինչպես նաև նոտարի կողմից ինձ չի իրազեկվել վերոնշյալ գործարքից <ԱԱՀ մասին> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ պարբերությամբ սահմանված կարգով իմ կողմից ԱԱՀ վճարելու պարտավորության վերաբերյալ:

Նշված գործարքը ԱԱՀ-ով հարկվելու մասին տեղյակ չեմ եղել, ուստի համապատասխան հաշվարկ հարկային տեսչություն չեմ ներկայացրել: Հետագայում, ՊԵԿ Կենտրոնի <Տ կողմից ծանուցվելուց հետո, ներկայացրել եմ 2011թ-ի 4-րդ եռամսյակի ԱԱՀ-ի հաշվարկ, վճարել առաջացած հարկի և տույժի գումարները: Սակայն, լրացուցից հաշվարկված տուգանքի գումարի հետ համաձայն չեմ:

Ելնելով վերոգրյալից դիմում-գանգատով Արմենուհի Մալխասյանը խնդրում է կատարել լրացուցիչ առաջադրված պարտավորությունների վերահաշվարկ և ազատել հաշվարկված տուգանքից:

Որից հետո հաշվի առնելով, որ դիմում-գանգատով բարձրացված հարցն արդեն իսկ պարզաբանվել է, ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի նախագահին հասցեագրված 19.02.2013թ. գրությամբ, Արմենուհի Մալխասյանը բերել է միջնորդություն՝ դիմում-գանգատն առանց քննության թողնելու վերաբերյալ:

<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի <բ> ենթակետի համաձայն. <Դիմումով հարուցված վարչական վարույթը կարճվում է, եթե դիմողը գրավոր ձևով հրաժարվում է իր դիմումից>:

Ելնելով վերոգրյալից Հանձնաժողովը գտնում է, որ Արմենուհի Մալխասյանի դիմում-գանգատի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

Քաղաքացի Արմենուհի Մալխասյանի դիմում-գանգատի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը կարճել:



Հանձնաժողովի նախագահ՝

Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ